

Ազատութիւն

ԿԻՍՍԱՄԱՆԱԾ
ԱԶԱԴՈՒՅԻՆ ԻՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ.

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ
ԱՄՍՈՑՆ 15 ԻՆ ԵՒ 30 ԻՆ

Խմբագիր—Տնօրէն
ՀԱՅԿԱԿ Յ. ԷԿԻՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն երկրի համար
Տարեկան Մէկ տոլար

Ո՛ր է է ծրար կամ գրութիւն
ուղղել հետեւալ հասցէին
TO THE: **AZADOUTIUN,**
438 Pearl St.
New York City, U. S. A.

Azadoutinn,
LIBERTY.

Published Twice a month
By
Azadoutinn Publishing Company

438 Pearl St.,
NEW YORK CITY.

H. ECUINIAN,
Editor.

SUBSCRIPTION PRICE, free of postage, \$1.00 a vae

Entered at the New York Post Office as
second class mail matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, 1892 Մայիս 15

Ա. Զ. Դ.

Յառաջիկայ թուով կը լրանայ
բաժանորդագիրն մեր այն բաժա-
նորդաց սրբ մէկ տարիի համար
բաժանորդագրութեան էին ԱԶԱԴՈՒ-
ԹԻՒՆ լրագրին: Մեր այս բաժա-
նորդներէ կը խնդրուի ընդ հուս
վերանորոգել իրենց բաժանորդ-
ագրին յառաջիկայ տարիի հա-
մար, եթէ կը փափաքին թերթ
ստանալ անընդհատ:

Կեցցէ՛ Հայոց Հայրենասիրա-
կան Միութիւնն, և երկիրք աւե-
լի զօրութիւն տան այն կեդրոնին
որ իւր ծաղկազարդ ճիւղերն ար-
ձակած է եւրոպայի, Ասիայի, Աֆ-
րիկէի և Ամերիկայի մէջ շատ տե-
ղեր:

—o—

Սակայն անոնք որք չեն չիկ-
ներ Հայհայել աղգային այս մեծ
հասարակութեան գէ՛մ, թող պահ
մը շուրջ ամեն իրենց աշքերն
տեսնելու այն արդիւնքներն որք
յառաջ եկած են միեւնոյն զօրու-
թեան շնորհիւ: Ի՞նչ ատիճանի
ամբարշտութիւն է, փոխանակ քա-
ջաւերելու, այդ զօրութեան դէկն
ու զեկաւարդ վնասելու ստորին
փորձեր փորձել միշտ:

—o—

Մարդիկ կան որք կը շարշար-
ուին մեռնելէ առաջ միայն, բայց
են շատեր ալ որք մեռնելէ վերջ
կը շարշարուին իրենց գործած սը-
խալներուն ու յանցանքներուն հա-
մար: Անոնք որք արդարեւ ու ան-
մեղը կը շարշարեն այս կեանքի
մէջ, պարտին գիտնալ թէ մեռնե-
լէ վերջ պիտի ընդունին փոխարէ-
նըն, եթէ երբէք կարենան իրենց
օձիկն ազատել արդարութեան
ձեռքէն գերեզման մտնելէ առաջ:
Բայց երանի անոնց որք արդարու-
թեան համար կը հալածուին, զի
ապագան անոնցն է անշուշտ:

ԳԱՍԱՌ—ՔԱԹՈՂԱՆ ԱՂՔԱՏ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Նոր-Նախիջեւանէն Ապրիլ 3
թուով Մշակի գրութեան մի նամա-
կէ կը քաղենք հետեւեալներն որք
կը վերաբերին Հայոց անուանի
բանաստեղծ Ռաֆայէլ Պատկան-
եանի (Գամառ Քաթիպայի) նիւ-
թական վիճակին:

«Ճանաչելով ձեզ իրեւն մի
մարդ, որի սրտի մէջը միշտ ար-
ձագանք են գտնուում ամեն բարի
առաջարկութիւններ և որը միայն
կարող է այս դէպքում իր կորով
ձայնը բարձրացնել յօգուտ առա-
ջարկութեանս, խոսարհաբար կա-
ղաչեմ Հայ Հասարակութեան ու-
շաբարութիւնը դարձնել մեր միակ
բանաստեղծի, Ռաֆայէլ Պատկան-
եանի ծանր գրութեան վրա: Ա-
մօթ է ինձ գրել, որ բանաստեղ-
ծը յետին չքաւորութեան մէջ է:
Առողջութիւնը յուսահատելի է,
բայց աւելի յուսահատելի են սուղ
միջոցները: Ոչ թէ գեղի և բժշկի,
այլ և գերդաստանի ապրուստի և
հացի փող չը կայ: Տանը կահ կա-
րասիք և իրեղէններ մնացած չեն,
բոլորը վաշխառուների ձեռքն են
անցած: Սրտամկիկ տեսարան է
ներկայացնում բանաստեղծը. աւ-
կոյին ընկած, նիւար դէմքը, յու-
սահատ աշքերը, որոնց մէջը դեռ
բանաստեղծական վառ կայծը մե-
ռած չէ, դժուար է մոռնալ ե-
թէ միայն մէկ անգամ տեսնէք:
Առողջութեան վրայ հոգալ, մտա-
ծել նա կարող չէ, նրան միշտ
տանջում է վաղվայ հացի լըն-
դիրը:»

Հայ աղբիւր համար արատ մ'է
տեսնել Գամառ-Քաթիպայի նը-
ման մի անձ այսպիսի վիճակի մը
մէջ: Նա վաճառական մը չէր որ
իւր աղբատութիւնն այսինչ կամ
այնինչ պատճառներու վերադը-
րենք, արհեստագործ մը չէր որ
ուրիշ պատրուակ մը գտնել կա-
րելի ըլլար: Նա բանաստեղծ մ'է
աղգային և մշակ մը աղգային
այգիլի մէջ:

Որչա՛փ մեծ ամօթ է մեր աղ-
բի համար երբ մեր մշակներ այս-
պէս չքաւորութեան մէջ կը թո-
ղուեն՝ ապերախ գտնուելով ա-
նոնց անփոխարինելի աշխատու-
թեանց: Եւ ի՞նչպէս կը յանգը-
նինք արտնշալ թէ մեր մէջ նշա-
նաւոր գրողէններ շատ չեն ել-
ներ: Եթէ աշխարհի մեծ աղբերն
մեր վիճակ ունենային և այս կեր-
պիւ յարգէին իրենց աշխատու-
նեք, նոցա մէջ ոչ միայն բանաս-
տեղծութիւնն այլ և ամէն ինչ
մարած պիտի մնար բոլորովին:
Բայց Հայ աղբն է որ ունի իր մէջ
Գամառ-Քաթիպայի նման մար-
դիկներ որք տեսնելով իսկ իրենց
մութ ապագան դեռ կաշխատին
աղբի սիրուն: Եւ ս'ր ատիճանի
ամբարշտութիւն է այսպիսի կամա-
ւոր նախատակներու աշխատու-
թեանց փոխարէն ապրուստ մը,
հանգիստ ապրուստ մ'իսկ չտալու
չափ անպիտան լինիլ: Օտարք ի-
րենց բանաստեղծներն, իրենց
գրողէններն և աշխատաւորներն
անբաւ հարստութեամբ կը վար-
ձատրեն, իսկ մենք դեռ չի սոր-
վեցանք չոր գովեստներ կարդա-
լէ գատ ուրիշ ոչինչ ընել անոնց:

Մեր հարուստը արդէն լուռ
է և խուլ, իսկ ընթերցասէր ու
բարեկեցիկ երիտասարդը, գիտէ
միայն փոխ առնել այսինչ և այն-
ինչ գրողէնի կամ բանաստեղծի
աշխատութիւնն կարդալ և ըսել,
«արդարեւ մեծ մարդ է, մեծ
հանճար ունի, ապրի հաղար աղ-
բի»: Բայց բնաւ չի մտածեր թէ
այդ մարդ ի՞նչպէս պիտի ապրի
երբ ինքն ու իրեն նման ուսում-
նասէրներն յօժար չեն քանի մը փա-

րայ իսկ տալ այդ «մեծ հանճա-
րի» զիրքն գնելու՝ կամ որ նոյնն է
մասամբ օգնելու համար անոր:
Ահա այս է մեր աղբատութեան
մի փորձաքարն որով կարելի է
Հայ մարդու արժանիքն չափել:
Բա՛ճՖին աղբատ կը մեռնի. Ծե-
րէնցը նիւթական անտիրանձելի
վիճակի մէջ կանցուցնէ իւր օրեր:
Աղամեան աղբատութեան մէջ կա-
ւանդէ հոգին. Դուրեան, Պէ-
շիկիւթաշեան և այլ շատ մը աղբա-
յին մարդիկ նոյն օրինակ վիճա-
կի կենթարկուին: Գամառ—Քա-
թիպայ ու ատոր նման շատեր ալ
այսօր հացի կարօտ վիճակի մը
մէջ կը մնան: Ապրին անոնք որոնք
քար սիրտ մը կը կրեն իրենց կուրծ-
քի տակ ու անըզայ են բոլորովին
այսպիսի դէպքերու առջեւ...:

Արդ ո՛ւր է ուրեմն այն աղ-
բատութիւնն զոր ունենալ կը
կարծենք...:

—Սակայն կայ տակաւին աղ-
բի մէջ փոքր մի խումբ որ եթէ
չի կրնար մեծ բան մ'ընել, գէթ
կարող է այսպիսեաց կտոր մը չոր
հայ հայթայթել: Տարակոյտ չկայ
թէ այսպիսիք այս առթիւ եւս
պիտի փութան ընել ինչ որ կա-
րող են ընել: Ամերիկայի Հայ գաղ-
թականութիւնն ևս լինելով մի
բեկորն նոյն Հայ աղբութեան,
որ Գամառ-Քաթիպայներու կեանք
ստուա, պարտի ցոյց տալ թէ ինքն
ալ կարելից է և գիտալ այսպիսի
պարագաներու առջեւ:

Արդ հրաւէր կը կարգանք Հայ
գաղթականութեան զգայուն մա-
սին Հանգանակութեան մ'սկսիլ
մեծ բանաստեղծի ցաւերն ու նե-
ղութիւններն թէթեւցնելու հա-
մար:

Եթէ առաջնորդող մը չունինք
այս առթիւ, Արժ. Յ. Վ. Սա-
րաճեան ստարակոյտ չունինք թէ
պիտի առաջնորդէ մեզ, և ԱԶԱ-
ՏՈՒԹԻՒՆն պիտի ընէ ինչ որ կա-
րող է ընել:

Կապանքը լսել ժողովուրդէն
այս մասին և կը յուսանք որ այս
առաջարկութիւնն ձայն ու ար-
ձագանք կը գտնէ Հայ հասարա-
կութեան սրտին մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ.
ԺՈՂՈՎՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ
ԼՐԱԳԻՐԸ

Հայկական Միութեան Գործ.
Ժողովն կը ցաւինք ըսել թէ իւր
պաշտօնին իւր գէնք զործածել լու-
կըսած է իւր անդամոց անձնա-
կան կիրքերն հաղեցնելու հա-
մար — այս կամ այն անհատի գէ՛մ
մաքառելու, և եթէ կարելի լինի
անոնց վնասելու նպատակու: Բայց
սա երեւակ անհատներն սխալ մի-
ջոցներու կը գիտն իրենց անձնա-
կան հաշիւներն մաքրելու համար:
Տըթ. Կէպրիէլ աղգային կեանքի
մէջ գողի մ'ու մասնիչի մը ամօ-
թալից գերն կատարած լինելուն
համար ԱԶԱՏՈՒԹԻՒՆ մարանչե-
ցաւ և պիտի մարտնչի անոր գէ՛մ,
բայց այս բանգէտ կամ անգէտ բը-
ժիկն Հ. Միութեան կողմանէ իրեն
փտահացուած այդ պաշտօնն կը
գտնէ յարմար կերպ ԱԶԱՏՈՒ-
ԹԻՒՆի խմբագրութեան գէ՛մ մա-
քառելու համար: Ոչ աղաճէն
փտութիւն է այդ:

Եթէ Տըթ. Կէպրիէլ իր պա-
տին ու անունն մաքրելու բաւա-
կան զօրուոր փտտեր ունի թող
այդ փտտերով կուրի մեզ գէ՛մ,
և եթէ ունինք մենք ալ աղգային
կեանքի մէջ ոճիրներ զործած,
թող այդ յանցանքներ մեր երե-
սին զարնելով հրապարակէ փախ-

ցունէ զմեզ, առանց սակայն Հայ-
կական Միութեան մի պաշտօնին
ետեւ պահուած՝ ԱԶԱՏՈՒԹԻՒՆի
խմբագիրն անդամակցութենէ զըր
կելու տկար փորձ մը փորձելու,
որն որ ամենավատ ու ստորին ձեւ
մ'է անձնական հաշիւներ մաքրե-
լու համար: Սակայն Պ. «Կազմիչը
կամ պետը» ծովն ինկած մարդու
մը պէս ձեռքերն կոհակներուն
կը նեւէ աղտակելու համար, և ե-
թէ օձի մ'իսկ հանդիպի, անոր
ալ կը փարի եղբը եղնելու նպա-
տակաւ: Արդարեւ այսպիսի գիր-
քի մը մէջ կողոլ մարդիկ միայն
կրնան այն օրինակ տկար փորձեր
փորձել ԱԶԱՏՈՒԹԻՒՆի խմբագրի-
րեն վնասելու, զայն վախցնելու և
կամ ճնշում բանցնելու համար
անոր ի բնէ ազատ և անեկիւղ
գրչին վրայ, որ գիտցած է ցոյ-
սոր իւր իսկ համալուսն պաշտպա-
նել, առանց ինքզինքն դրամի կամ
փառքի հետ փոխելու:

Գիտեն անշուշտ ընթերցողք
թէ Թուրք կառավարութիւնն ևս
իւր երկու տարի առաջ փորձ մը
փորձեց ԱԶԱՏՈՒԹԻՒՆ լրագիրն
վնասելու, և կամ ուրիշ կերպիւ
ըսելով ճնշում բանցնելու մեր վը-
րայ իւր դեռողանին միջոցաւ, բայց
ի մեծ ցաւ «Հայք» խմբագիրին
չարաչար պարտութիւն մը կրեց:
Մեզ կը թուի թէ Թուրքի չի կըր-
ցած ըրածը այժմ իւր հաւատարիմ
գործակալն կամ պաշտպանը՝ գէթ
մասամբ՝ ընել կը փորձէ իւր կրած
պարտութիւնն թէթեւցնելու հա-
մար, բայց սակայն այսպիսի փոր-
ձի մը յաջողութիւնն հուսանական
չի թուիր երբէք:

Պ. Իշխանեան որ Գործ. Ժո-
ղովց երկրորդ անդամն է. չենք
մեղադրեր շատ, զի խեղճ մարդը
ուրիշ միջոց մը չունի մեզ գէ՛մ
մաքառելու: Անոր սրտին մէջ ցաւ
պատճառած են ԱԶԱՏՈՒԹԻՒՆի
զիտողութիւններն ու արդար բո-
ղոքներն իւր վատ պաշտպանա-
րութեան գէ՛մ մի քանի ամիսներ
առաջ: Բայց իւր խրատ կըսենք
այդ բարեկամին թէ ԱԶԱՏՈՒ-
ԹԻՒՆի գէ՛մ մաքառելու լաւա-
գոյն կերպը արդար լինին է մի-
այն: Այն որ Հայ մարդուն Անդ-
գիրէն սորվեցնելու պատրուա-
կու գրամ կը կորդէ քաղաքէն, և
փոխանակ դատախոսելու այսինչ
կամ այնինչ մարդուն զործակա-
րութիւն կրնէ վարժարանի մէջ,
չի կրնար պրծիլ ԱԶԱՏՈՒԹԻՒՆի
աշքերէն:

Ալեքսանեան անուն պատանի
մատին՝ որ Գործ. Ժողովց երրորդ
անդամն է՝ ոչինչ գրել պատիւ կը
սեպենք: Ուստի կը բուսկոտա-
նանք խորհուրդ առլ մեր այս շա-
րակամաց ուրիշ միջոցներու գի-
մել վրէժ լուծելու համար, զի
ԱԶԱՏՈՒԹԻՒՆի խմբագիրն գիւ-
րութեամբ վախնալու վատ սիրտ
մը չունի. դա բաւական ամուր է
այդ պիտի հարուածներ արհամար-
հելու ըամար...:

ԵՐԳԵՐ ԿՈՒՋՈՒՆ

Մեր հրատարակած Աղգային
երգարանին մէջ նախադասութեան
ով զնէլ կարգ մը չի հրատարակ-
ուած աղգային երգեր ու բանաս-
տեղծութիւններ պատիւ ունինք
ներկայիս յայտարարել արդոյ
հատարակութեան թէ սիրով պի-
տի ընդունինք մեզ զրկուած ամէն
երգեր ու բանաստեղծութիւններ՝
հրատարակելու համար այս ընդար-
ձակ երգարանին մէջ:

Առանց երգ մը տեսնելու և
քննելու հրատարակութիւնն չենք
ստահովել:

ԵՐԳ ԾԻՐԻՆԻ

Մէկմը շունիմ քիչ մը եարիս
գանկլտիմ,
կերպիւ կերպիւ սիրտիս լցուիլ ա-
լամով:

Լեզուով ըսիմ լեզուիս հանգը հա-
տեր է,

Թուղթ է չօգտայ պարէ գրիմ
գալամով:

Ես վըր խօսամ տայիմ եսի
կըվիթէ

Խօրեատը սուրբ էրիւր գրիւր կը
պաշտէ

Ընծի խրով էնոր պառը ու հաշտ է
իմ հիտիս չոթ, բնուր հըմմէ չը-
րամմով:

Կէս գիշերուն գրուցնին կը
կցուի

Քէֆիւր կէսին հարդի լուռէ կրաց-
ուի

Սչքիս կելաւ, սիրտիս արին կը լըց-
ուի

Մահ է չը կայ պարէ գնիմ դրա-
մով:

Խղճուի Շիրին ի՞նչիւն չիլա
չէրվրտի

Թքուի մրուի փթի վարուի կըռ-
վարի

Խօռեատէ ինք արթնցու թ'ել սիր-
վարի

Ես լընցի սիրտիս լցուա վարամով:

ՄԵԾ ԳԻՒՏ ՄԸ

Անցեալ գիշեր ստիկան մը
քաղաքիս 135րդ փողոցէն անցած
ատեն մի ծրար գտաւ որն որ՝ ա-
ռանց բանալու անմիջապէս ոստի-
կանատուն բերաւ ու յանձնեց իւր
զլխաւորին ըսելով:

— Տէր, այս ծրարն 135րդ փո-
ղոցի մէջ գտայ, ճող ավէնիւր
մօտ:

— Ի՞նչ կայ ատոր մէջ:

— Ձեմ գիտեր. բացած չեմ
ընաւ:

— Բաց ուրեմն տեսնենք թէ
ի՞նչ է բովանդակութիւնն:

Ոստիկանն անմիջապէս բացաւ
ծրարն որով մէջ փոքրիկ կաշեայ
պահարան մը կար մասնաւոր փա-
կանքով փակուած: Փականքը ի
հարկէ կտրեցին ու պահարա-
նին մէջ 1000 տոլարի թղթադը-
րամ գտան: Թէ ոստիկանապետն
և թէ հոն ներկայ եղող ամէն ոք
ապշած մնային:

Որո՞ւ կը վերաբերէր արդեօք
այդ ստտին, անկարելի էր այդ
գիտնալ, զի ոչ քարդ մը կար ծը-
րարին մէջ և ոչ մի կտոր թուղթ
բացի ԱԶԱՏՈՒԹԻՒՆէ մը որ կի-
սով պատուած էր:

Ոստիկանապետը լրագիրն տես-
նելուն պէս խրեց ու քննել սկսեց:
Թերթի մէկ լուսանցքին վրայ ա-
նուն մը կար անձանթ տաւերով,
որն որ կարելի չէր կարդալ:

Ոստիկանապետն ԱԶԱՏՈՒ-
ԹԻՒՆի հասցէն գտնելով, հետեւե-
ալ օր երկու ոստիկանի հետ Ա-
ԶԱՏՈՒԹԻՒՆի այդ թիւը մեզ յը-
ղեց տեղեկութիւն մը ստանալու
համար անձանթ տաւեան ու ա-
նոր հասցէի նկատմամբ:

Երէկ երբ ոստիկանք մեզ գա-
լով պատմեցին ինդիրն ու ցոյց
տուին այդ թերթն, որոյ լու-
սանցքի վրայ կարդացինք անմի-
ջապէս Պ. Հ. Յ. և անի անունն՝
որայ հասցէն գիւրութեամբ գը-
տանք մեր տեսարակի մէջ ու յը-
ցինք ոստիկանապետին:

Երկու ժամ վերջը Պ. Հ. իւր
մեծ կորուստն գտած էր ԱԶԱ-
ՏՈՒԹԻՒՆի շնորհիւ:

Տարեկան բաժանորդագրին է
մէկ տոլար միայն: Դիմել խմբա-
գրութեան նոր հասցէին՝

438 Pearl St. N. Y.

ՕՐՈՒՄՆ ԿԵԱՆՔԻՐ

Ամուրի երկրամասը թիւնն. — Ներկայացմանը եղանակը. — Ամուրի երկրամասը թիւնն. — Ներկայացմանը եղանակը. — Ամուրի երկրամասը թիւնն. — Ներկայացմանը եղանակը.

Աղբային գումարմանը մէջ Հայ աթիւններու օրհարդք փոքր թիւ մը կը կազմեն միշտ. Հ. Հ. Մ. Օթեակի տուած վերջի ներկայացման իրիկունը իւր 400 անձերու մէջ հազիւ թէ 20 Հայ ներկայացուցիչներ կային իգական սեռէն. իսկ մնացեալը մեծաւ մասամբ երիտասարդներ էին ուսանողներէն ու կայստաւ բայց չափեր թոյնած ու խամրած՝ դաւաճար ծաղիկներու նման: Ահա տեսարան մը որուն վրայ քիչեր ուշադրութիւն դարձուցած են արդարեւ: Մեր գաղթականութիւնն Հայ աղբի կենսական ոյժն է որ իւր երկիրը ձգելով Հոս ապրուստը ձարելու կուգայ, և աղբային ծանր աշխատութեանց մէջ կը մաշի՝ հեռու ընտանեկան դուրգութեանը ու համակրանքէ: Ուր կրնայ երթալ ծայրն այս անընդհատ գաղթականութեան: Բանի՞ Հայ երիտասարդութիւնն մաշէ հոս իւր զօրութիւնն ու կայստաւութիւնն օտար տարերց մէջ: Եթէ Հայ երիտասարդն որոշած է վերջապէս հոս մնալ, և երկար առան մնալ, թող մտնանտնայ և գէթ մտնանտնայ կատարէ իւր պարտականութեանց մին՝ չի գրկելով ազգն այն իրաւունքէն որով նա կը պահանջէ իւրաքանչիւր անհատէ գէթ մի քանի դաւաններ: Այլ հերիք երիտասարդութիւնն հոս փափայ ու Հայ աղբային անհամբեր իրենց ապագայ տնտեսական ճանապարհը դիտեն յուսալար: Թող աճի ազգն ու բազմանայ, զի շատ դաւաններու պէտք ունի Հայ աղբային: Հայտնաբերել Ստանաքը միտնող կը պատուիրէ Մասեաց սարերէն «տանգէք և բազմացարուք և լցէք զայն» Հայոց:

— օ —

Ներկայացումներու եղանակն է. Բիշ ատեն առաջ տեղի ունեցաւ Հայկական Միութեան տարեկան ժողովը մի փոքր ներկայացում: Սպիտակ լինի կատարուեցաւ նոյն Միութեան ժողովին մէջ: Կոնկրետ թատրոն մը. Սպիտակ լինի տեսանք վաճառ Մամիկոնեանն ու երեք Բաշկէն, անկէ շաբաթ մը վերջ Հայկական Միութեան նորէն տօնեց վիճարարութեանց ամսագրած մը, և ցուէ լընէ թէ յառաջիկայ շաբաթի երեկոյեան նիստին մէջ եւս նոր փառադր մը պիտի բացուի թատերարձանի վրայ բերելով կարգ մը շահաւոր իրեր ու տնտեսական ազդեցիկներ: Մեզ կը մնայ հոս սուրբ փառն համար և ձեռք տալ արդարին իւր արդար ճամբուն մէջ: Բայց եթէ կայ հետաքրքրական մի բան, այդ ալ սա է թէ արդեօք նուազածուք ինչ կերպիւ պիտի շարունակեն իրենց փողը և սրուն ձայնով...:

— օ —

Հայկական Միութեան յառաջիկայ նստին մէջ: — Խօսք կու գիտ: — Խօսքը Տէօթի օրինն է, ըստ պատկեր մի քանի թուէ: Ահա Տէօթի օրն ոտքի կենի, ու քիչ մը կոտորուի եւ վերջ և երկարահատակ երեւնալու համար մասնաբաժնի վրայ կենալով կուրի խօսի: — Ես այդպէս չեմ տեսներ ինչիւր, կրնայ, պէտք է որ մասնաբաժնի իւր փառն, իւր փառն: Այն որ կրնայ վարդապետ փառադրելու և փառադրելու այդ ե-

րեկոյ ու խօսքը չի լինուց, սխալ կը ներկայացնէ ինչիւր. և երբ կըսէ թէ շատեր սկսեցին դուրս ելնել, կը ստէ: Կը բողբոքեմ այդ սուտին դէմ, կը բողբոքեմ, կը բողբոքեմ: Բայց ցաւալի է տեսնել թէ զուր կընող այդ բողբոքութեան անձերէն մի քանիներ բարեբաղդաւար ներկայ գտնուելով այդ նստին, նորէն դուրս կեննեն ցոյց տալով համար թէ ատենաբանն է ստախոսը: Հ.

ԸՆԹԱՑԱՆԱԲՏՔ

Քաղաքիւ Քոյէճ օթ Գարմանի գեղադարձութեան վարժարանէն ընթացաւարտ եղան այս տարի երկու Հայեր, որոց մին է Պ. Տ. Պոյաճեան, Տիգրանակերտցի, միւսն Միքայէլեան Կարապետ, Քարբեղեցի: Սոքա յաջող ընտելութիւն մը անցունելով իրենց վերջական ընդունեցան քաղաքի Միքայէլ Զօլ նշանաւոր թատերադասին մէջ ի ներկայութեան խումբէն բազմութեան, մայիս 31 երեկոյին: Տ. Պոյաճեան որ միտնող երիտասարդ է՝ մեծ ուշադրութեան գրաւած է իւր դասընկերներուն մէջ ցոյց տուած մեծ յաջողութեանը համար: Սա մին էր այն տան ամենայնայնայն ընթացաւարտներէն որոց առաջի երեքը մասնաւոր նուէրներ ընդունեցան:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Զորահարկերով այս նոր ընթացաւարտներն փայլուն ու յաջող ապագայ մը կը մտնեն իրենց՝ ոյժ փառադրելու մէջ:

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՈԼՍԻ

«Արմէնիա» կը գրեն. «Երկու երեք շաբաթ է ի վեր նոր ձերբակալութիւնը կան ատու գաւառացի ու Պոլսեցի Հայերէն. կայ մաս մը որ արտասահմանի հետ թղթակցութեանց պատրուակաւ կը քննուին. մաս մ'ալ կայ որ Զատիկ օրերը պղտիկ տղայի մը ձեռքով սպանակաւ նամակ գրկեր են եղեր Պատրիարքին որ հրաժարի և ճանչցուած լինելով լատնարդու երէն: Մէկ քանիներ ալ Աւագ հինգշաբթի երեկոյ Մայր Եկեղեցւոյ մէջ վիճակ մը հանեցին որ դասի դուռը բացուի եւ Պատրիարքը ընդապառու դէպ այն կողմ կը փազէ շուտով և ահա ձայն հանողներն անմիջապէս կը ձերբակալուին: Պէտք է տեսնել այդ միջոցին դուռնախօսի դէմքը: Ուրիշներ ալ կան որ բանտարկուած են ի շնորհ Ռուսոնու գէն այս օրեր այստեղ եկած մի անձի որի մասին ուսիլ ստոյգ տեղեկութիւններ ստանալէ յետոյ կը գրեմ ձեզ յաջորդ նամակովս և որ անշուշտ զարմանք պիտի պատճառէ շատերուն սրտնք դեռ չեն ճանչցած այդ մարդ...:

Այդ վերջին ձերբակալեանքէն մէջ կան Տօնապետեան, Հ. Կիրճեան, Թէրզեան անուն երիտասարդ բժիշկ մը և այլն: Դատարան նախապետեան խիստ բընութիւններու ենթարկուելէ վերջ իւր անմեղութիւն բողբոքին հաստատուելով արձակուեցաւ:

Զատիկ առթիւ Պատրիարքը և Սիմոն Պէյր Նալբանդ Կիւրթեան լատնարիկաց ապաստելեան համար: Նալբանդ Կիւրթեանը զարմեալ արտօնուի վարդապետ լինելու: Ստանդ Պատրիարքը մերժած լինելով, բանտարկելոյ վիճակը նոյն կը մնայ:

ՊԱՆԴՈՒՆՏՆԵՐՈՒ ՆՈՐ ՕՐ ՆՈՐ ՏՍՐԻՆ

Միշտ կանցնին կերթան օրեր տարիներ Փոխում է աշխարհ և մարդկութիւնը Բայց ես միշտ նոյն եմ չունիմ նորութիւն Վշտօք ցաւերօք հեծում ու մաշում:

Նոր օր նոր տարի առեղծուած մէջ ինձ Հառաչանք ու սուգ է միայն բաժնիս Հեռու աշխարհում լամ ու հառաչանք Ոհ ինձ համար չէ նոր օր նոր տարի:

Երբ աչքս արտասունք սիրտս վշտեցում Բեզ համար մաշումս սիրուն հայրենիք Օտար լուծին տակ երբ ազգս տեսնեմ Չունիմ ինձ համար նոր օր նոր տարի:

Անին, Արտաշատ երբ աւեր տեսնեմ Արաքսի ախտը ալեաց արտասունք Հայկեան պերճ փառքերս յաճիրնս տեսնեմ Ինձի համար չէ նոր օր նոր տարի:

Երբ կը տեսնեմ ես գոռոզն Եւ թաղա Փառքով մեծութեամբ հպարտ պերճացած Սարակին Սլաւ երբ ազատ տեսնեմ Չունիմ ինձ համար նոր օր նոր տարի:

Գերին թօթափելիս կը գերութեան լուծ Համայնք սորվեցան եւ իրենց դասեր Բայց թշուառ Հայը նոյն լուռ և նոյն մոռնջ Տանում է վշտաց և շատ գրկանքներ:

Հայկեան Սուրբ փառք փայլուն գրօք Երբ ձեռքումս բռնած վագր կընուի Կը փշրեմ ոտքիս գերութեան շուրջ թան Սոյն օրն կը տօնեմ նոր օր նոր տարի: ՍԵՂՈՒՄ Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ Նիւ Երբ:

ՀԱՅԻ Ի ՓԱԹԸՐՍՈՐՆ Կը լսենք թէ փաթըրսն մեր ազգայիններն պատրաստութիւն տեսած են նոյն քաղաքի հիմնարկութեան հարկարմեակին առթիւ կատարուելիք մեծ հանդէսին մէջ մաս ունենալ:

ՀԱՅՐԻԿԻ ՊԱՏԿԵՐԸ Հ. Հ. Մ. Նիւ Երբ թիւ 0 թեակը չինել տուած է ՀԱՅՐԻԿԻ փառաւոր պատերազմներն ընտիր քաղաքի վերայ մարտի տղազորութեամբ: Կը փառաւոր իմրագրութեան քով հաւաք 10 Սէնթի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՅԻՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԼԻ ԱՆԳՆԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ ՄԱՍՆ Ա.

Նիւ Երբ — Տպգր. ԱՐԱՐԱՏԵԱՆ Գրեց ԱՐԱՄ ԱՅՎԱՏԵԱՆ Գին 25 սէնթ Կը յանձնարարենք այս փոքրիկ մատենան Անգլիերէն ուսանելի փառաբողաց, որը լաւ բանալի մը կը գտնեն անոր մէջ Անգլիերէն լեզուի դասերն արանալու համար: Գին փառաբող պարտին գիմել հեղինակին հետեւեալ հասցէն է:

A. AYVADIAN 72 University Place, N. Y. City

Վ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ Ուսուցիչ, Մաս. Կը հրաւիրէ իւր հայրենակիցներն հանդերձեցնելու կամ գրել խաբէ գեղեւ համար նախ գիմել Bay State clothing Co. ընկերութեան վաճառատունն ի թիւ 46 և 48 Ֆրանկլին Բլոքի, ուր ինքն ամէն շաբաթ երեկոյներ ներկայ լինելով մասնաւոր հոգ կը տանի Հայ յաճախորդաց:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ ՃԳՆԱԻՈՐ ԷՂՕ

(Շար. տե'ս թիւ 53) Բ. — օ —

Գիւղի մի հեռաւոր անկիւնում, մի խումբ ծառերի մօտ, կար մի անշուք խրճիթ, ուր բընակվում էր ծերունի վրթնօնիւր ընտանիքի մի քանի անդամները:

Ինքը շատ ծեր էր, ուստի և՛ եկեղեցի գնալուց ու արտում իւր Եղօ որդու աշխատանքի վրայ հըսկելուց բացի՝ ուրիշ գործ չէր կատարում կատարել: Իւր կինն էլ այդպէս. միմիայն եկեղեցի էր գնում և տուն դառնալով հըսկում էր իւր հարսի տանու գործերին և կամ թէ փոքրիկ թուրք գիրք առած՝ անգագար խաղացնում էր, նրա առջև մոռանալով իւր հասակը, երախայի պէս ծիծաղում, խաղի էր սարքում և զուարճացնում էր թոռնիկին: Բաւական հանգիստ ապրում էին. մի լուծ եղ ունէին, որով իրենց հողից կարողանում էին օրական պարէնը ձեռք ձգել. մի կով ունէին. և ուրիշ ոչինչ. էլ ինչ պէտք է սակաւապէս գիւղացու համար:

Վրթնօն երջանիկ էր, որովհետեւ զօժէր իւր վիճակից և ուրիշ ունեցածին չէր նախանձում. բարեպաշտ էր մոլեռանդի չափ. այդպէս էլ նա կրթիւ էր իւր սրբուհին. մի այդպէս էլ հարս էր գըտել նրա համար, և տան մէջ նախնի «ի սուրբ սրբի խօսք ընդ Աստուծոյ» վերնադիր կողմ գլուխները անդադար անգիր կերպով կրկնում էին: Շարականները՝ նրանց երգերն էին, վարք սրբոյ՝ ձեռնադրի երկար երկնային զրադմունքը. երբէք եկեղեցուց յետ չէին ընկնում ժամերգութեան ժամանակ. քահանան նըրանց տնիքը ձնապակու էր. օրհնում էր շաբաթ, կըր սկսում էին թիւիւ կարանք՝ եթէ մէջը մոռէ էր ընկել և թաղը՝ եթէ կատուն ջուր էր խմել մէջիցը:

Եղան, երբ փոքր էր, մի քիչ ծառայել էր քաղաքի մի աղայի տանը, ուր և սովորել էր կարգալ, այնտեղից իւր հետ նագիւղէն էր բերել վարք սրբոյ, ժամագիրք, աւետարան և սաղմոս: Եթէ նրա արար վարող լինէր և ինքը վարժուած, նրա անպատճառ գիւղի վարժապետ կանէին. բայց Եղան շատ համեստ էր, գիտէր՝ որ ինքը վարժապետ չէր կարող լինել: Չէր հպարտանում իսկ որ կարգաւ գրել գիտէր:

Այնչափ բարեպաշտ էր, այն ատենան կատարի կերպով հաւատում էր խմորներին, խաղացողներին, անբարոյականներին, այնչափ պարտաւորում էր կերպի օրը գործողներին, պատ չպահողներին, որ արժանապէս նրա տնունը գրել էին ձգնաւոր Եղօ:

Եւ իսկապէս որ Եղան ճշմարտ էր: Նա մի կաթիլ գինի կամ օղի բերանը չէր դնիլ. գգվում էր ծխախոտից. աչքերը խոնարհեցնում էր, երբ անցնում օտար կընդ առնէր. փախում էր, երբ մի տեղ կըրակի օրերը գիւղացի նստած՝ նոր մօղա ընկած խաղի թղթերով «սկանալի» էին խաղում: Կատակածանքով էր նայում այն մարդուն, որին քիչ էր տեսնում եկեղեցում... Բացարձակ ճշմարտախօս էր և արդար:

Ամենք սիրում էին նրան. ամենքի հետ վարուիլ գիտէր. ամենքին խորտանէր էր տալիս, որովհետեւ խեղճ էր:

Իսկ առողջութիւնը. — նա յիշեցնում էր Մուշեցի գէպի Ռուստամի կամ Կ. Պոլիս նոր պանդխտութեան գնացող երիտասարդներին՝ իրենց երկար հասակներով, ջրալինջ բազա կենքով, լայն թիկունքներով և դուրս ցրցում անող կոթքներով:

(Շարունակելի)

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԾԵՐ ՍԻՐԱՀԱՐԸ (Շար. տե'ս թիւ 53) — օ —

Մարտիրոս աղային տունէն դուրս ելնելով շիտակ տուն եկայ, մէրաքներու տաղըթմիչ ընեմ տէ՛յի ըրտիկին պինդիւր կէս ըրի, այն ատեն ինձ եղած բոլոր անարգանքները մոռայ: Միւս օրը իմ հայիս վրայ երկար բարակ խորհեցայ, սա կարգուելու եախօտ աղջիկ ուզելու մէտէյէն ձեւեցի, չափեցի, վերջապէս սա դարէրին եկայ որ ալ եւս աղջկան հօրը չի գիմեմ, այլ շիտակ սիրտս սիրեմ աղջկան երթամ և սէրս յայտնեմ անոր, տիւղէյսի Ամերիկացիներուն ըրածին պէս ընեմ. և ինչո՞ւ չընեմ էֆէնտիմ, միթէ մեր երկրի աղջիկներն ալ Ամերիկայի աղջիկներուն պէս ազատ ըլլալու չեն. Ամերիկայի մէջ, մարդ մը երբ աղջիկ մը սիրելու ըլլայ սէրը անոր կը յայտնէ, աղջիկն ալ էկէր դայիլ եղաւ նէ, երկուքը կերթան կը պատկուին վէտէյէմ: Նէ հօրը կը հարցունեն նէ ալ օրը. և ինչո՞ւ հարցունեն, միթէ անոնք երկու նէվիվաններու իրարու վըրայ ունեցած սէրը կրնա՞ն հասկնալ, անշուշտ չեն հասկնար. ինչո՞ւ անոնք համար էր հոս գալիւղ լը աղջիկները տունը կը մնան եախօտ ինձի պէս կընէյիմ մարդիկներ — եանիս երիտասարդներ ըսել կուգեմ — կնիկիդ կը մնան կոր: Վերջապէս ես ալ միտքս դրի որ անկէ ետքը շիտակ աղջկան երթամ և անոր հետ խօսելով դորս կարգադրեմ և հիշ չուրհէ չունիմ որ չափիս յաջօղիմ. ասկէ զատ աղջիկներու ունեցած ազատութիւնը որ իրենց ծնողը կամքին տակ կաշկանդուած և գերի եղած է մի միջոցաւ կազատուի ինչ ըսել է, էֆէնտիմ, երբ աղջկան մը կը հաւնիս և քեզի կին ըլլալու կորոչես փոխանակ իրեն հետ տեսնուելու և զինքը համոզելու պարտաւոր ես երթալ հօրը, և սըլը խթիւն թագէ անցնիլ: Կսկրին շատ մը բաներ հարցնել: Ստակ ունի՞ս... որչափ ունիս... ազգասէր ես թէ չես... ինչ քաջագործութիւն ըրած ես և կամ ինչ տեսակ քաջագործութիւն ունիս... քանի տարեկան ես... աս հարցումներուն պատասխանը անոնք էն ետքը, կոկիսն գլխէդ մինչեւ ոտքդ քեզ գիտել, գեղեցիկ ես... մազերդ սեւ են թէ դեղին, քիթդ երեսիդ որ կողմն է, պէտքիդ քանի թեւերէ կը բաղկանայ, պոյրդ պոյրդ ինչպէս է, մասնաբոլ, ոտքդ և հագուստներդ վերջապէս ամենը կը գիտեն. վրայ այն մարդուն որ այս բաներուն մէջ քիչ մը զուտուր ունենայ. գործիս չես գար կըսէ — սանքի ինք կնիկ պիտի ըլլայ ինձի — ու երթաւ բաւով կը կոկիս: Ձերկնցնեմք. միտքս դարձիս պէս միւս օրը բրի. նախ գրքին մէջէն շատ մը սիրահարական բառեր գոց ըրի որպէս զի աղջկան սիրտը չուտով չահիմ, յետոյ հագուելով շիտակ Մանկունիին աղջկանը իփրտալիս այն գընացի:

Գ. ՊՈՒՂՏԱՆԵԱՆ

Շարունակելի) Ա. Զ. Դ. Անգլիերէն և Գալիերէն դաս առնել փառաբող անձինք կրնան զիւր ամառաւիկի գնով այցելու դաստան մը գտնել շաբաթի երեք գիշերի համար: Փառաբող պարտին գիմել հետեւեալ հասցէին: Դատաւոր, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Ինի խմորալութեան միջոցաւ:

